ՆՈՐ-ԴԱՐ

№ 202 ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ Շորեքշաբթի 12 Դեկտեմբերի 1884 Շորեքշաբթի 12 Դեկտեմբերի ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 202

Տարեկան 10 բուբլի. վեց ամսով՝ 6 բուբլի. երեք ամսով՝ 3 բ. 50 կ.
Հատասի՝ 5 կոպեկ։
Բաժանորդ դրվում Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատանը։

Խմբագրության հասցեն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“.

Խմբագրությունը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարությունները ընդունվում են ամեն ժամանակ։ Յայտարարության վճարը բացին 2 կ. տկլամինի համար՝ կրկնապատկի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ

Թիֆլիսում

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ 1885 ԹՈՒԱԿԱՆԻՆ

ՆՈՑՆ ԴԻՐՔՈՎ և ԾՐԱԳՐՈՎ

(Երկրորդ տարի)

Ծրագիր

I. Տէրութեան կարգագրութիւններ։
II. Առաջնորդող յօդուածներ-առօրեայ ամեն տեսակ խընդիրների մասին։
III. Քրոնիկոն — լուրեր, առօրեայ անցքերի համառօտ տեսութիւններ, պատահական յօդուածներ զանազան նիւթերի վերաբերութեամբ։
IV. Թղթակցութիւններ — Կովկասից, Ռուսիայից և միւս երկիրներից։
V. Քաղաքական — Քաղաքական կեանքի և երևոյթների վերաբերեալ տեսութիւններ, յօդուածներ և լուրեր։
VI. Խառն լուրեր։
VII. Հեռագիրներ։
VIII. Առևտրական տեղեկութիւններ։
IX. Խմբագրական պատասխաններ։
X. Բանասիրական — Ֆելյետօններ, պատկերներ, զրոյցներ, վէպեր, վիպասանութիւններ, գիտութեան, գեղարուեստների, արհեստների և արդիւնագործութեան ամեն ճիւղերին վերաբերեալ աշխատութիւններ և քննադատական յօդուածներ։
XI. Յայտարարութիւններ—Հայոց և օտար լեզուներով։

ՏԱՐԵԿԱՆ գինն է 10 բուբլի, վեց ամսուան՝ 6 բուբլի, հատով՝ 5 կոպ.

Խմբագիրը—Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

Ծանօթ. „Նոր-Դար“-ի խմբագրութիւնը անցեալը իրրև փորձ ընդունելով իւր կազմից ոչինչ խնայելու չէ առաջիկայում ամեն օրեայ թերթի բաժանմունքները կարելւոյն չափ աւելի ճոխացնելու և պակասը լրացնելու։ Մնումէ միայն, որ ընթերցող հասարակութիւնը բաժանորդ գրուելով աջակից գործի յաջողութեանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis (Caucase) Rédaction „Nor-Dar“։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Պապականութիւնը մեր ժողովրդի մէջ։
Քրոնիկոն. Լուրեր։ Պատրիարքական խնդիր։
Թղթակցութիւններ. — Թիֆլիսից և Ալէքսանդրապօլից։
Քաղաքական. Լուրեր։
Հեռագիրներ։
Դերև գէմ.—Նոր-Նախիջևանից։
Առևտրական.—Տեղեկատու։
Յայտարարութիւններ։
Բանասիրական.—Ընկեցիկ։

Ա. Զ Ր.

«Նոր-Դար»-ի առաջիկայ 1885 -ի համար բաժանորդագրութիւնը բացուած է։ Բաժանորդ են գրվում ՄԻՄԻԱՅՆ խմբագրատանը—պռոտատան եռա, Սամերա վրայ ե-կեղեցուն հանդէպ։ Օտարաքաղաքացիք գիմում են հետևեալ հասցեով. Тифлисъ, редакція «Норъ-Даръ».

Եւրոպայում և Թիւրքիայում «Նոր-Դար»-ի տարեկան բաժանորդագինը՝ 30 ֆրանկ է։ Ուսանողները վճարում են 10 ր.։

Թիֆլիս, 11 դեկտեմբերի 1884

ՊԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ.

VI.

Ազգերը աւելի բարձր կուլտուրայի տիրանալով՝ պետական կեանքում նրանց համար արիւնը, ծագումը այլ ևս չեն կարող իրենց նախկին նշանակութիւնը ունենալ։ Այսօր մի ազգի անդամները միմեանց հետ աւելի սերտ կապուած են լինում, իրրև ազգ մի ամբողջութիւն են կազմում, երբ ամենին ընդհանուր է միևնոյն տիրապետող նպատակները, ձգտումները, երբ ամենին կապում է միևնոյն շահերը։ Այդ շահերը միայն նիւթական չեն, այլ աւելի բարոյական, մտաւոր, հոգեկան, բարձր շահեր են։

Նրանք, որոնք ներքին համոզմունքի համերաշխութեանը նշանակութիւն չեն տալիս և ամեն բան արդէն ապահովուած են համարում, երբ ծագումի, արիւնի ազգականութիւնը կայ, թոյլ իմանան, որ իդէան, միտքը չեն ճանաչում ոչ ծագում, ոչ արիւնի ազգականութիւն, ոչ տեղ և ոչ էլ հեռաւորութիւն։

Այժմեան քաղաքակրթութեան, երթևեկութեան և ազգերի միմեանց հետ անընդհատ յարաբերութիւնների դիւրութեան ժամանակ, առանձին և վճռական նշանակութիւն ունի մտքերի, հոգեկան շահերի համերաշխութիւնը։

Հնդկաստանում, Բելուջիստանում, Նեղոսի ափերում և ուրիշ շատ հեռու երկիրներում ծագումով, լեզուով, բարքով, վարքով միմեանցից տարբեր ժողովուրդների մէջ կարծում ենք, որ ոչինչ կապ չը կայ։ Բայց մի իդէա, մի միտք դրանց կապում և բոլորին էլ յուզում է և դրանք իրրև մի ամբողջութիւն համերաշխ են ըզգում, թոյլ այդ իդէան, այդ միտքը յայտնուի Մահդիի կամ մի ուրիշ կերպարանքով... Այդ միտքը, այդ իդէան իրրև կրօն, իրրև ներքին համոզմունք կախարդիչ զօրութիւն ունի. նա կարող է ամենահեռաւորը մօտեցնել և ամենամօտիկը բաժանելով հեռացնել։

Եթէ ներքին համոզմունքի համերաշխութիւնը այդ զօրութիւնը չունենար, էլ չենք հասկանում թէ ինչու Շամախու վիճակի բողոքական հայ գիւղացին Բելլինի «նէմեցով» պիտի ոգևորուէր, իսկ Ախալցխայի կաթոլիկ հայը Հռոմի մասին պիտի երազէր...

Կարծում ենք, որ այս մի շարք յօդուածներում մեր խորհրդածութիւնները ի մի գումարելով ժողովրդի իսկական շահերին բարեկամ և մտածող հայը կը հասկանայ, թէ որքան վնասվում է մեր ժողովուրդը երբ նրա հոգեկան կեանքի միութիւնը, համերաշխութիւնը խանգարվում է, նրա մէջ կրօնական միութիւնը խանգարուելով։ Հայ ժողովուրդն ունի իւր ազգային եկեղեցին, որ իւրն է և գրա դէմ կռվում է – պապականութիւնը, մարդորսութիւնը... Պապականութիւնը ոչ թէ միայն հայի ազգային կրօնին յատուկ հոգուց և ձգտումներից տարբեր հոգի և ձգտումներ է ներկայացնում, այլ իւր բնաւորութեամբ նա ազգային եկեղեցու դէմ կռուող և անհաշտ թշնամի է, նա ազգային եկեղեցու դէմ պատերազմող եկեղեցի, eclesia militans է։ Միևոյն կռիւը ուզում է մղել հայի ազգային եկեղեցու դէմ և՛ բազմաճիւղ և՛ բազմագոյն բողոքականութիւնը, որը իրրև կրօն բուն իւր հայրենիքում տուող։

Մի երկու շաբաթ ևս առանց տեղի, առանց օրևէ աշխատանքի քաշվեց Խալօլիսը իւր դառն օրերը. և ահա անգումի բուքը, անկոչ հիւրի նման եւ-ևեցաւ նրա չէմքում։ Այդ բաւական չէր. Խալօլիան ու Ընկեցիկը սկսան հալուիլ, մաշուիլ քաղցից։

Մի հատիկ եւք էր մնացել այս վիճակի ծանրութիւնը մասամբ մեղմացնելու. դուրս գնալ՝ ողորմութիւն հայցել։ Խալօլիսը երկար ժամանակ տատրերում էր այդ անսովոր և միանգամայն անարդ քայլը անելու, բայց սովը, որ նողկալ, նենայել չը գիտէ, ահռելի կերպով անչարժ կանգնած նրա աչքի առաջ՝ սպառնում էր նրան և նրա բարեկամին տեղն ու տեղը սպանել, եթէ միայն մի փոքր ևս կը յապաղէր այդ միակ ելքից օգտուելու։

Ամեն տեղից յոյսն ու ձարը կտրած՝ վերջապէս Խալօլիսը վճռեց և առաջին անգամ իւր կեանքում մեկնեց ձեռքը։

Կարծիք չը կայ որ նա մի բան ստացաւ և մի օր ևս ձիգ տուեց իւր և իւր ընկերի հղիւելի գոյութիւնը։ Բայց հետևեալ օրը նա չը կարողացաւ այլ ևս տեղից կանգնել։ Նա ամբողջ զգայարանքների մէջ զգում էր սոսկալի ցաւ և կատաղեալ թուլութիւն։

—Ինչ անեմ. հարցնում էր ինքն իրեն շուարած։

—Ի՞նչ անեմ. կարծես կրկնել էր ուզում նրա հետ միասին և Ընկեցիկը, տխուր և լսգնալի հայեացք ձգելով իւր անքարող տխրոջ ուղղակի աչքերի վերայ։

Բայց ո՛չ նա և ո՛չ միւսը այս հարցերին պատասխան չէին գտնում. ափսոք էր չարաչար տանջուիլ և՝ ի վերջոյ քաղցածութիւնից մեռնել։ Ուրիշ ոչինչ։

Ընկեցիկն այլ ևս չը կարողացաւ դիմանալ այս անտանելի վիճակին։

Մի երկու անհանգիստ պտոյտ անելով սենեակի մէջ, իւր սրտաբեկ տխրոջ շուրջը, խելօք կենդանին մօտեցաւ դրանը և թաթերով չանդռտելով՝ աշխատում էր բանալ։

Խալօլիսը բարձրացաւ չոր ու մերկ տախտակի վերայից, որի երկարութեամբ նա պառկած էր, և բանալով դուռը՝ դուրս ազատեց շանը։

Խե՛ղճ բարեկամ. և մե՛ծ ես ապատեցի քեզ նրա համար միայն, որ սովամահ անես քեզ։ Չըն մէջ խեղդուիլը բիւր անգամ աւելի հեշտ և ձեռնտու չէը լինի քեզ և մեզ համար։

Մի տեսակ դառն կսկիծ պատեց Խալօլիսի սիրտը. նրա աչքերը ակամայ լցուեցան արտասուքներով. և նա երկու ձեռքով երեսը պինդ ծածկած սկսաւ հեկեկալ անասէր մնացած որբ երեխայի նման...

„Փամա՛ւ“, մտածեց նա, փոքր ինչ

ԴԱՏԱԿԱՆ

Ս. Ս.

Ե՞ս ի՞նչ եմ անում, որ ինձ ամեն կողմից հալածում են, ինձ ոչ ոք չի սիրում, ինձ ոչ ոք չի հարգում, ինձ ոչ ոք չի ուզում հասկանալ, ինձ ոչ ոք չի ուզում ներել, ինձ ոչ ոք չի ուզում ներել, ինձ ոչ ոք չի ուզում ներել...

Ես ոչ մի վատ բան չեմ արել, ես ոչ մի հանցանք չունեմ, ես ոչ մի մեղք չունեմ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 նոյեմբերի. Յօդ. «Նոր Վրէմյա»-ի 176 թիւի մէջ կը կարդանք հետեւեալ տողերը.

«Ինչպէս յայտնի է, Ռուսիոյ մէջ ամէն տարի կը հրատարակուի մեծ քանակութեամբ գրքեր, որոնք կը պարունակեն ամէն տեսակ ստութիւններ, զրպարտութիւններ եւ անհեթեթութիւններ հայերու մասին։ Ամէն տարի կը հրատարակուին նաեւ հայերէն գրքեր, որոնք կը պարունակեն ամէն տեսակ ստութիւններ եւ զրպարտութիւններ ռուս

հարկ չկայ դրանց վերայ ուշադրութիւն դարձնել։"

Հարցմունքը լինելով առաջարկուած ներկայի համար, այսինքն այդ դպրոցայ այժմեան դրութեան համար առարկուած, յուսալի էր բնականապէս և պատասխանին լինել ներկայի համար, առանց չխոթելու ժխտելու ներկայն անցեալի հետ, և անցեալը՝ ներկայի, առանց գոնէ վայրաբար յաւելուածներ մէջ բերելու, և տարտամաբանութիւ քաջընկէց լինելու այնպիսի անձանց վերայ, որոնք արդէն վաղուց հեռացած լինելով այդ դպրոցներէն չէին կրնար հետևաբար և անոնց այժմեան դրութեանը պատասխանատու լինել, մանաւանդ որ այդպիսի անտեղի խառնուրդներն՝ ինքն ըստ ինքեան տաղտկալի լինելէն զատ՝ անօգուտ էին նաև խնդրոյն, և ցոյց կուտան խորամանկութեամբ մը խնդրէն փախչիլը։

Ահաւասիկ նրա մասին պատասխանը։ —Նա այդտեղ կը չուէ օր, արդարև, այդ դպրոցայ դրութիւնը նախանձելի չէ և թէ՝ „դրա պատճառը մենք չենք, այլ նիւթական միջոցների սղութիւնն է, որ արգելաւոր է լինում մեզ բարեկարգել այդ դպրոցները։" ասելով՝ կաւելացնէ թէ՝ „մենք միշտ ուշադրութիւն ենք դարձրել և այդ դպրոցների վերայ։" և այդպիսի ուշադրութեան իբր ապացոյց՝ լռելեայն մէջ կը բերէ, և թէպէս այլոց, նաև Հռիփսիմեան օրիորդաց դպրոցի կրօնուսուցչին (որ ես էի) հեռացնելն ու տեղն աւելի յարմարաւորն նշանակելը։

Գալուստ Զաքըլեանն այստեղ չի մտաբերել գոնէ, որ իւր չկրած ուսուցչաց հեռացնելէն և անոնց տեղ աւելի յարմարաւորը անձինք նշանակելէն, այլ և ասոնց՝ այժմեան ուսուցչաց՝ մօտ տարիէ մը ի վեր արդէն այդ դպրոցայ մէջ պարապելէն ետև՝ կ'առաջարկուի իրեն այդ հարցը։ Իսկ եթէ այդտեղ անհրաժեշտ լմն էր Դ. Զաքըլեանին, որ դպրոցաց աննախանձելի դրութեան պատճառը և զանոնք բարեկարգելու արգելաւոքը՝ „մենք չենք, այլ նիւթական միջոցների սղութիւնն է", կասէ,—եթէ, կասեմ, անպատճառ հարկաւոր էին իրեն, որ այդ արգելաւոքին զատ, և ուրիշ այդպիսի պատճառներ, որպէս և իրեն նըմանօրինակ ուշադրութեան յապաղոյց վիճակը վինտռել գտնել նաև ուսուցչաց կողմանէ,—այն ատեն աւելի յարմար վարուած կը լինէր նա այդ մասին, եթէ իւր աչքի տակն հարցնէն եղած, ժամանակակից, արդէն մօտ տարի մը ժամանակ այդ դպրոցայ մէջ պարապող այժմեան ուսուցիչներուն գոնէ ցոյց տար. և ոչ թէ անոնց, որոնք արդէն վաղուց յարաբերութիւն մը չունէին այդ դպրոցայ հետ։ Այսպիսի, կամ, թերևս աւելի ուժեղ, պատճառները և վիճակը զանկաս չէին, կասեմ, իրեն համար և դպրանոցին մէջ, ուսկից որ մէկ քանիին հեռացուած էր, մէկ քանիին ալ ջանադիր եղած հեռացնելու, ինչպէս, օրինակի համար դպրանոցին (հիմնադիր և նախկին տեսուչ) այժմեան կրօնուսուցչին, Հ. Զաբիփեանին, ես հեռացնելու կաշխատէր, բայց այդ մասին իրեն բոլոր ջանքն ու ճիգը իդերև ելան։

Ի հարկէ այս ամենն իրեն, Դ. Զաբըլեանին ալ յայտնի է, յայտնի է նաև այսօրինակ վարմանց՝ իւր ինձ դէմ ունեցած կրքի հետևանք լինելը։

Դ. Զաբըլեանը՝ կասէ որ այդ դպրոցայ նիւթական միջոցները սուղ են, Ոբեմն ցանկալի էր, որ ինքն ալ իւր կարողութեան չափ գործակից քիչ կամ շատ ընդարձակելու այդ միջոցները, ընդարձակելու՝ եթէ ոչ իւր գրպանէն, կամ առ ժամանակ մի ձրի դասատուութեամբ Հռիփսիմեան դպրոցի մէջ, ինչպէս որ ինքը կ'առաջարկէ իրեն ենթադրեալ ուսուցիչներէն մէկ քանիին ձրի դասատել, — այլ գոնէ այնքան աշխատէր, որքան իւր ակնարկած և իրմէ հայածուած անձինքն աշխատած են, թէ ձրի դասատուութեամբ և թէ ամբողջ չաբաթներ ու ամիսներ դռնէդուռ քաշելով այդ դպրոցայ նիւթական մասին օգնութիւն գտնելու։

Դ. Զաբըլեանը՝ ուշադիր է, ինչպէս ինքը կասէ իւր պատասխանին մէջ։ Բայց սակայն միևնոյն ժամանակ նա մատնացոյց լինելով միմիայն երկու դպրոցայ վերայ, երրորդը՝ գրեթէ զանցառութեան կամ անյայտ լռութեան կուտայ, մինչդեռ հարցը երեք դպրոցայ համար առաջարկուած է իրեն. նա մանաւանդ չը յիշէր գոնէ իւր պատասխանի սկիզբը, զրած այն միայնակ խոստումը, թէ՝ „պատրաստ ենք տալ բաւականութիւն հարցասէր պարոնի հետքըքրութեանը։" Դժուար է կարծել, որ այդ զանցառութիւնը յառաջացած լինի անուշադրութենէ։ Բայց ինչ հարկ, երբոր մէջտեղը անձնական կիրք մը կայ, երբոր՝ այդպիսի ատեն շատ անգամ գովեստն լուռ ու մունջ կարծեն միմեանց հետ ի վայր գալարուղ։

Ասի թէ՝ Դ. Զաբըլեանի այսօրինակ վարմունքը լինի դէմ ունեցած կրքի հետևանք է. թէև նա ատով չի կրնար խղճմտութիւ իմ այդ մասին արդէն կեղևապատ վէրքերը։

Թերևս յորգելի ընթերցողք կամենան դիտալ թէ. ինչ կիրք է այդ,— ահա պատմութիւնը։ Ասկից 7 կամ 8 տարի առաջ, Դ. Զաբըլեանը իւր աշակերտութեան օրով, արձակուրդի ատեն՝ այստեղ Նախիջևան գալով, և այդ օրերը տեղւոյս նախկին հոգևոր դպրոցի աշակերտաց տարեկան հարցաքննութիւնը սկսուած լինելով, եկաւ նա դպրոց յատիներէն լեզուի հարցաքննութեան օրը՝ երբ հրաւիրեալ բազմութիւնը հաւաքուած էր։ Դպրոցի տեսուչն ու այդ առարկայի ուսուցիչն էր Աղաւիերեան Գրիգոր սրբազան եպիսկոպոսը, և դասատուներէն մէկն ալ ես էի։ Այստեղ այդ Զաբըլեանը չը նայելով որ ինքը անկոչ և անհրաւէր եկած է դպրոց, Թոյլ տուից իրեն հարցաքննութեան ևս խառնուել, աշակերտաց շփոթել գանազան անտեղի հարցերով, և այս առթիւ ցոյց տալ իրեն լատինագէտ լինելն (այս վերջին տկարութիւնը մինչև այժմ ալ թէ խօսակցութեան և թէ գրութեան մէջ կը բանեցնէ) և, ի հարկէ, այստեղ չը գտնելով իրեն բաւականութիւն՝ սկսեց վշտացնել սրբազան տեսչին, ներկայացնելով տեսակ մը թոհ-ևբոհ։ Այստեղ չեմ կրնար չը յիշել հանգուցեալ նաց վերայ եղեալ այն խոցին և անբացատրելի տպաւորութիւնը, որ կպղձը սրբազան հոս պատահելէն լռութիւնը։ Այդ ժամանակ իմ մեղքը այն եղաւ, որ ես խնդրեցի սրբազանէն, երբ տեսչէ, և պատշաճան սանել այդ Զաբըլեանին, կամ հրամայել դուրս հանել։ Ասոր վերայ Զաբըլեանը բարկացած դուրս ելնելով՝ գնաց, ու սպառնալով մը ասաց ինձ. „Տէր Սարգիս, այդ բանը մի մոռնար պահէ, ատոր վրէժը, եթէ քեզմէ չառնեմ, գազանները կառնեմ"։ Եւ իւր սպառնալիքը չը դադար կատարելէ, երբ տեղւոյս տղայնի դպրոցայ տեսչութիւնը ձեռք բերաւ և վրէժխնդրութիւնը այնտեղ հասոյց, որ անոտ պատճառներով հեռացոյց ինձ Հռիփսիմեան դպրոցի մէջ վարած պաշտօններէս։

Պ. Զաբըլեանը խօսելով Հռիփսիմեան օրիորդաց դպրոցի համար՝ կ'ասէ. „Որտեղ այժմ մտել է կարգ և կանոն"։ Կը հարցնեմ Դ. Զաբըլեանին, մեղմէ առաջ անկարգ և անկանոն էր այդ դպրոցը. և թէ դուք, այժմ ասելով ձեր ատենէ, ձեր ժամանակէ է վերը արդեօք կը կամենաք հաշուել ձեր այդ ժամանակագրական ցոյցը։ Ի հարկէ, ձեր տեսչութիւնը դեռ մէկ տարեկան լինելով, և այդ ձեր ասաց այժմ՝ այսինքն Հռիփսիմեան օրիորդաց դպրոցի մէջ կարգ և կանոն մտնելը մինչեայն ձեր տեսչութեան օրերուն կը վերագրէք։ Եւ այդ կանէք՝ առանց գոնէ մտաբերելու թէ՝ մինչև ձեր տեսչութիւնը, արդէն տարի մը առաջ այդ դպրոցն ստանալով իւր գոյութիւնը սերտողութեան քանիւք վիճակիս նախկին վոխանորդ-առաջնորդն դերապատիւ Սուքիաս սրբազանի (այժմ Թեմական Առաջնորդ Աստրախանու վիճակին). կառավարուած է և նորին սրբազնութեան անձնական հսկողութեան տակ. ուրեմն ինչպէս կարելի էր երևակայել անգամ, որ ձեզմէ առաջ այդ դպրոցը (Հռիփսիմեան) գտնուելով սրբազան հօր պէս պատկառելի անձնաւորութեան մերձաւորագոյն խնամարկութեան տակ՝ լինէր անկարգ և անկանոն, և միևնոյն հոգաբարձութեան օրով, միևիմ կը Թոյլատրէք, Դ. Զաբըլեան, որ սրբազան հայրը և դպրանոցի մեծապատիւ հոգաբարձութիւնը, ևս և տեղւոյս կանանց քնկերութեան խորհրդի անդամուհիքը՝ հրսկելով այդ դպրոցի վերայ, այդ իրենց քրանաչան վաստակներէն մէկուն բարձի Թողի արած էին, և դուք միայն, ինձ հետացնելով, կարողացաք բարեկարգել գայն. միևիմ, կասեմ, դրանք անտարբեր կըմնային. միևիմ նրանք բոլորն ալ ձեզ չափ ուշադիր կամ բարեկամ չէին դպրոցին, մինչդեռ սրբազան հայրը ամենայն օր գրեթէ ամբողջ ժամերով այցելութեան կուգար այդտեղ, ինչպէս նաև միւս դպրոցներն յաճախակի. կը Թողում ասել նաև համեստասիրտ ընկերուհիաց այցելութիւնը։ Իսկ ձեր այդտեղ արած այցելութեան քանակութիւնը դուք հաշուեցէք։ (Երկու անգամ էր կարծեմ ուրբ ամուսայ մէջ, բացի չորս ուսուցչական ժողովներէ, որոնց առթիւ ձեր ունեցած գործունէութիւնը ձեզ յայտնի է)։

Այժմ Դ. Զաբըլեան՝ ինչպէս բացատրելու է ձեր այդ մէջ բերած այժմը։ Տեսնաք, միևիմ ինչ կը հասնի այդ ժամանակագրական սլաքը։ Դ. Զաբըլեան, ձեր այդ դարձուածքն և նկատմունքն ըստ մեծի մասին այնպիսի անձնաւորութեանց կրլրեցարերն, որոնք արդէն իրենց վերջաւորութեամբն ու գործաւորութեամբ վաղուց յայտնի են՝ ընդ ալատող աշխարհին, ուր որ դուք դեռևս ձեր առաջին զորզոջուն ոտնիսիը կը գնէք. նրանք արդէն ցոյց տուած են այդտեղ իրենց պատուղը, իսկ դուք դեռ միևիմայն կը խոստանաք։

Հուսկ յետոյ, ցանկալով ձեզ ամեն տեսակ բարիք ձեր առաջնկայ ասպարիսի մէջ, կը վերջացնեմ խօսքը յիշելով Դեղագոս Ամենաշուէն ասածը, Թէ՝ „որպեսի եմ, մի Թռչէր այնչափ բարձր, մինչև հրոյ կամարն այրել գքս Թևս, և մի այնչափ ցած, մինչև գետնոյ կրոյ կակղել գնոսա. ընդ միջին Հանապարհ Թռիր տպահով։

Սարգիս քահանայ Ոսկեբերանց.
19 Նոյեմբերի,
Նոր-Նախիջևան։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Թ֊ի Փլիսկ Հրապարակի վերայ վաճառահանուող ապրանաց ընդհանրական գնները Դեկտեմբերի 11-ին

—

ՅԱՒԵՆ.—Գառնուվի պատը		70 կ
„ Գանձակի	„	68 „
„ Շորագալի	„	—80 „
„ Ղազախի	„	50 55 „
„ Երևանի	„	ապատ.
„ Նուխու	„	75—70 „
ԱԼԻՒՔ.—Բէհաճով 1-լին		12 ք. „
Եղբարց Հալալեդեանցներէն.		
Կարմիր Գլուխ.—00-ի		11 ք. 50 „
„ „ 0		10 — 80 „
„ „ 1		9 — 20 „
„ „ 2		8 — 50 „
„ „ 3		7 — 75 „
„ „ 4		6 — — „
„ Գառնուվի պատը		85 -90 կ.
„ Գանձակի	„	85 „
„ Շորագալի	„	95 „
„ Խառն տեսակները		60—70 „
ԳԱՐԻ.—Սպիտակը	„	40 „
„ Սևը	„	42½ „
„ Գաբեջրի Կամար		60 „
ԲՐՆՋ.—Աքսուլաց	„	2 ք. 10 կ.—20 „
Պաշարը շատ		
„ Նուխու	„	1 „ —50 „
„ Խառն տեսակները		1 „ 30—40 „
ԱՂ.—Թուսխալի	„	50 „
„ Ղուրմի	„	93—95 „
„ Կազդուրանի (դալար)		65—70 „
„ „ (չոր)		55—60 „
„ Բազմայ	„	25 „
ԻԻՂ.—Օդեասյի	„	11 — „
„ Նիժնեղօրօդսկի	„	11 20 „
ՁԼԹ.—Նիբրամոլ		8 ք. 80 „
„ Սալի	„	4—45 „
„ Զիմապալի	„	10 „ 50 „
ՃՐԱԳՈՒ.—Զանազ. տեսակ		3 „ 30 „
„ Հալած	„	4 „ 70 „
ՆԱԽԹ.—Զան. գործած		պ. 35 -40 „
ՄՈՄ.—Կրնատովնիկովի		պ. 11 ք. 60 „
Օդեասյի	„	ՀԷ կայ
„ Տօլչէի գործած	„	11 „ — — „
ՍԱՊՈՆ.—Տօլ. գործ. 1 տ.	„	5 ք. — „
„ „ „ 2 տ.	„	3 „ 40 „
„ „ „ 3 տ.	„	2 „ 40 „
„ „ „ Մարմարիոնի		3 ք 50 „
„ „ „ 1 և կէս ֆունտ		4 „ 50 „
„ Բայանդուր. և ընկ. գործ.		
1 տուս		պ. 4 ք. 60 „
2 տուս.	„	3 „ 30 „
3 տուս.	„	2 ք. 40 „
Մարմարիոնի	„	3 „ 40 „
ԼՈՒՅԻԻ. (ալիչխա) Օսիպովի, հաշիվը		3 „ 80 „
„ Կրնովի	„	ապառուած
„ Կարմիր 300-անոց	„	ապառուած
„ Կաբինետի	„	38 „ 50 „
ՇԱՖԱՐ.—Բրօդսկի	պ.	7 „ 12 „ Թոյլ
„ Դնիեպրի մեծագլուխ		6 ք. 95 կ.
„ „ մանրագլուխ	պ.	7 ք. 65 կ.
„ „ նոսրած Բրոդսկի		7 ք. „
„ Սաբալօվկայ		ապառուած
„ Կոբրատ Ուլադովկա	պ.	7 „ 10 „
„ Փխուն		6 ք. 90 „
ՇԱՖԱՐԱԻԱՋ.—Օդեասյի	պ.	5 „ 70 „ 75 „
Կ ա ր ա մ ե լ Շապոշնիկովի		
Ժեսթի արկղում		7 ք. 70 „
„ „ փայտի արկղում		6 „ 60 „
„ Պօլիակովի		
Ժեսթի արկղ.		7 „ 60 „
„ „ փայտի արկղ.		6 „ 60 „
Մ ա ք ա ր օ ն.— Օդեասյի		պ. 4 „ 20 „
„ „ Սամարայի		5 „ — „
ԿՕՃԻ.—Մ օ ք ր օ		պ. 21 „ — „
„ Բիս		„ 13 „ 80 „
ԿԻՆԱՄՈՆ. (դարչին)		„ 10 „ 30 „
ՊՂՊՂՂ.—Սինապօրի		պ. 15 ք. 80 „
ԿՈՃՈՊՂՊՂՂ (կոճ).—Սպիտակը		պ. 15 „ 80 „
„ Մոխրագոյնը		„ 12 „ 90 „
„ Դեղինը		„ 6 „ 50 „
ՊԱՂՂՂ. (շիբ).		„ 2 „ 15—20 „
ԱՐՁԱՍՊ (Ձաղ)		„ 1 „ 50 „
ԾՇՈՒԻՄԲ (Քաքաքիմ)		„ 2 „ 40 „
ԽՈՒՆԿ.—Սպիտակը		„ 10 „ 30 „
„ Սևը		„ 6 „ 30 „
ԿԱՆԵՓՕԼ Դեղին		պ. 2 ք.
ՍՕԴԱ		„ 3 „ 20 „
ԿԱՅԵԿ		„ 16 „ Թոյլ
ՕՇԻՆԴՐ (Նաշագիր)		„ 8 „ 40 կ.
ՅԻՆԿ (լիտասվոյ)		„ 5 ք. 35 „
ՊՈՂՊԱՏ.—Մեղուկը		„ 24 ք. —„
ՍՊԻՏԱԿ Թիթեղ. (ժեստ)		„ 16 „ — „
ՁԱՄԻՉ (Սառա) քաղհինը		պ. (նոր)2 „ 40 „
„ Մեղուկինը (նորը)		„ 3 ք „
ՆՈՒՇՐ.		„ 11 „ 40 „
ԿԱՂԻՆԸ (Թխել)		պ. 3 ք. 40 „
ՇԱԳԱՆԱԿ		„ 1 „ 30—40 „
ԸՆԿՈՅԶ		—90 „
ՕՂԻՆ.—Առանց տակառի		5 ք. 50կ.%-ը 8³/₄
ՍՊԻՏՐՏ.— Տակառով		„ 9¹/₄
ՄՈՐԹ.—Ոչխարի (Մաք. Համաք)		զոյդը 90 կ.
„ „ (Օգնա. Համաք)		1 „ „ 20 կ.
Առևտուրը Թոյլ պաշարը շատ.		
„ Ադի (Մաք. Համաք)		1 „ 60—80 „
„ „ (Թաքազ. Համ.)		2 „ 60 — „
ՏԱՎԱՐԻ Կաշին		7ք. 50 կ.
Մաքսէլի Տանգէնա		39 ք. 25 „
„ Շէյսան		37 „ 25 „
ՔՈՒՐԴ.—Թաշլը—վերայ		ապառուած
„ Գանձակի		3 ք. 80 կ.
„ Փնտռելը չը կան		
„ Ղազախի		„ „
„ Շեղրա		„ „
„ Ղարաբաղի		„ „
„ Նուխու (գաշման)		3 ք. 80—90 կ.
„ „		Թոյլ
„ Խաչաձեի		8 ք.—8 ք. 25 կ.
Բ ա մ բ ա կ. Երևանի Ամբարկ.		
„ „ ամբարկ պ.		7 ք. 30 կ.
„ „ Գարադիողի ամբար		„ 6 „ 20—30 կ.
ՄԱՆԱՆԱԽ		„ 9 ք.
ԲՈՅՈՒՆ Նուխու		„ —
„ Իմերեթի		„ —
ԹԵԼ. —Կախվիմ		
ԼԱՍ (Ֆերիզն)		
ԸՆԿՈՅԶԻ ՈՍՏԼ.—(Նապղիվ լաւ տեսակը 4-6 ք. սորը տեսակը 1 ք.—2 ք.		
ՈՍԿԻՆ —Պօլիմպերթալը		7 ք. 98 կ.
„ Բաֆաթլուն		ապառուած
„ Տաճկաց լիբան		8 „ 92 „
ԱՐԾԱՒԻ.— Բաբլուհոց		1 „ 40 „
„ 20-կոպէկանոց		ապառուած
ԹԻՖԼԻՍԻ առևտ. բանկի ակցիան		255 ք.
„ Ֆազաքային	„	71-72 „
„ Ազնուականների կալուածական բանկի գրաւական տոմսը (Закладной листъ)		83—25 „
ՔՈԽԹԱՅԻՍԻ բանկի նոյն տոմսը		83—84 „
ՏՈՄՍԵՐ.—Պետական բանկի 5%		
1-ին		99 „ — „
2—5-րդ		98 „ — „
Աբևել. փոխառութ. 5%		
1-ին		95 „ 87 „
2-րդ		95 „ 75 „
3-րդ		97 „ — „
Վիճակահանութեան 5%		
1-ին շրջանի		225 ք. 75 „
2-րդ շրջանի		213 „ — „
ԹԻՖ.— կ և Ս. (К. и С.) Պօպով եղբարց		
1 ք. 40 կոպ—2 ք. 50-կոպէկանոցի համար զեղչ.		
մինչև 300 ք. 6%		
300 — 500 „ 9%		
500-ից աւել 12%		
„ Շուկայում մանաւանդ		
„ անձանց մօտ բոլոր տեսակների համար զեղչ %		12
ՇԻՈՒԽՈՏ.—Կուշնարեվի.		
Պապիրոս.		
1-ին և 2-րդ տեսակի զեղչ.		24—%
3-րդ „		19 - 10%
Թամբաքու.		
2 բուբլիանոցի զեղչ.		17%
1 ք. 20-կոպէկան.	„	16 „
„ 80	„	„ 11 „
„ 40	„	„ 8 „
„ Ամանօվի		
Պապիրոս.		
1-ին և 2-րդ տեսակի զեղչ		24%
3-րդ „	„	„ 12%
Թամբաքու.		
2 բուբլիանոց	„	18%
1 ք. 20 կոպէկանոց	„	17 „
„ 80	„	„ 12 „
„ 40	„	„ 10 „
„ Բազաչէանցի		
I և II տեսակ	„	25%
III	„	„ 20%
ԿԱՐԵՇԿՈ.—Փալնի	պուդը	6 ք. 60 „
„ քէմախատ	„	5 ք. 60 կ.
„ Բիմաբենկօի	„	7 „ 50—60 „
Խազամուղի (կարա)		5 ք. 52 „

—

Օդեասյի քօրսան, դեկտեմբերի 1-ին։

Կուրսեր հինգ ամսական.

Լ ո ն դ ո ն ի վերայ դեպք	956	վաճառք 954
Մարսէյլի „ „	265	265½ „
Փարիզի „ „	—	— —
Վիէննայի „ „	128½	„ 129
Բեռլինի „ „	—	— —
Ոսկին Պօլտինգերթալը	7—88	„ 7—80 „
„ Լիբան	8—70	„ 8—60 „
արծաթ. բուլլի	1 ք. 32 կ.	—1 ք. 27 „
Շագրաց. Բրօդսկի	6	„ 20 —
„ Չերկիզկի	6 ք. 15	-10 „
„ Գնիեպրի	6	„ — „
„ Մանրագլուխ (7 ֆնտ.)	6 ք. 90	—80 կ.
„ կոտրած-Ուլադովկա,		
Սպասկինները	6 ք. 35	—25
Տախտներները	6	„ 25 „
„ „ փխուն մեծագլուխները	6 ք.	
Շագրաւաղ	5 ք. 5 կ.	—4 ք. 95 „
Սառա (նորն)	3 ք. 25 կ.	
Նաշ (բարձր և ժողքած)	13 ք.	

Խմբագիր—Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ցենզուրայի Թոյլտուութեամբ մամուլի տակից դուրս կը գայ „Բնալուծութեան նշանակութիւնը գործնական կեանքի մէջ։". Հեղինակութիւն Բէհնաչէնի, Թարգմանութիւն Ս. Մուշեղեանցի. բաժանորդագինն է 50 կոպէկ. տպուելուց վերջը կը լինի մէկ մանէթ. բաժանորդներ կարելի է գրուել Ֆիլոֆեանի գրավաճառանոցում, Մ. Սարգսեանի մագազիայում (Армян. базаръ) և Շահնազարեանի տպարանում, Михаил. мостъ, д. Мирзоева. 12—1

Дозволено цензурою. Тифлисъ, 11-го Декабря 1884 г.

Տպարան Ա. Ս. Մխիթարեանի տ. № 12. Типографія А. А. Михельсона Гол. пр., д., № 13.